

ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ

ՄԵԾ ՀԱՅՐԻԿ

«Հայրիկ»-ութեան՝ փորձառու առանց որ ես ըլլայի,
«Մեծ հայրութեան» անցուցին անմիջապէս զիս այսպէս,
Նըման տըղուն այն ուշիմ, որ կը ցատկէ դասարան:
Ուշիմութիւն չէր սակայն իմ պարագաս, այլ անգոր՝

Զոհ մ'էի ես անտերունչ կեանքի անգո՛ւթ մէկ խաղին:
Թոռնիկներուս հետ մեծցող, եւ անոնց հետ մեծնալով՝
Ըմբոշանցի զանոնք լի. եղայ «մեծ հայր» փորձառու.
Ու մասնակից դարձայ ես անոնց անվերջ խաղերուն,

Աղօթքներուն, վէճերուն, եւ կրթութեան քացառիկ:
Անհետացան զրկանքներս եւ թանձրացեալ դառնութիւնս.
Եւ հիմա մեծ հայրերու նըման կ'ըսեմ՝ աննըման
Ե՛մ թոռնիկներս դայլայիկ. իրաքանչի՛ւրն ինքնատիպ,

Նոր կեանք եւ լոյս ու թովչանք, խի՛նդ կը բերէ հոգիիս,
Եւ զովութիւն մընացեալ, դիւրին, դժուա՛ր օրերուս:
Երկար ատեն մութին մէջ ապրելէ ետք վե՛րջապէս,
Այս նորածագ յոյսին դէմ՝ ես կը մոռնամ իմ ցաւերս:

ԱՆԵԼ